

Ա. Ի. ԼՅՈՒՆՅԱՆՈՎՍ.

Պրոլետարներ
բոլոր յերկրների,
միացե՛ք!



ЗАБЯНОТЕН
НИКОЛАЙ
ИСТОМОЛЕННИ
ИЗДАНИЕ
СССР

ԻԼՅՈՒՆՅՈՎ

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ
ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՏԱՐԻՆԵՐԸ

ԿՈՒՍՆՐՍՏ — ԲՍ.ԳՈՒ — 1934

087.1
Ռ-66

Նախ 819

ՎՅՈՒՄ
Ու-66

23 JUN 2009

Ս. Ի. ՈՒՆՅԱՆՈՎՍ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИКОБОСНОВАНИЯ
Лингвистических Наук
СССР

ԻԼՅԻԶԻ

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ
ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ
ՏԱՐԻՆԵՐԸ



ՀԵՎԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1934

ԿՈՒՍՏՐՈՍ
Բազու

26 AUG 2013

16956


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
ԵՄԻ ԿԱԾԱՐԱԿ
1993



59637-66

Թարգմանեց՝ Հ. Ամիրխանյան. Հայերենը խմբագրեց՝ Լիզա Դանիելյան.
Սրբագրեց՝ Ա. Սահակյան. Թողարկու՝ Կ. Քառանյան.

Baş Mətbuat Mydir. Myvəkilligi № 4566 ind. 90a. Sifariş № 71. Tir. 2000.
Firqənəsr № 149. İstehsalata verilmis̄ 21-İ-34. Capa verilmis̄ 1-İ-34 Cap.
listi 2. Kağız formatı 62×94. Bakı. Əli Bəjrəmov kycəsi, "26"-lar adını.
Azərbaycan mətbəəsində basıldı. „Kitab Sarajı“



Գրերբրտվսիւ տունը Սիմբիրսկում, վորտեղ Վ. Ի. Լենինն ապրել է մինչև
5 տարեկան հասակը (ծնվել է բակի կողմի սենյակում)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Մեր առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Ուլյանովը (Լենին) ծնվել է 1870 թվի ապրիլի 10-ին (23) Վոլգայի ափերի Սիմբիրսկ քաղաքում, վորը ներկայումս նրա հիշատակը հավերժացնելու համար վերանվանվել է Ուլյանովսկ:

Վլադիմիր Իլյիչի հայրը՝ Իլյա Նիկոլայեվիչն այն ժամանակ հանդիսանում եր Սիմբիրսկ նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչը: Նա հասարակ կոչում ունեցող մարդկանց ժառանգ եր, վաղ զրկվել եր հորից և մեծ յեղբոր ոգնությամբ դժվարությամբ կրթություն եր ստացել: Համալսարանը վերջացնելուց հետո սկզբում նա ուսուցչություն եր անում Պենզայում և Նիժնիում: Աշակերտները նրան շատ եյին սիրում, վորովհետև նա յերբեք չեր պատժում նրանց, նրանց մասին չեր գանգատվում դիրեկտորին, համբերությամբ և շատ հաս-



Իլյա Նիկողայիվիչ Ուլյանով
(Վ. Ի. Լենինի հայրը)

կանալի նրանց բացատրում եր
գասերը և կիրակի օրերն առանց
վարձատրութեան պարապում եր
նրանց հետ, վորոնք հետ եյին
մնում, վորոնց տանը վոչ վոք
չկար վոր կարողանար բացատ-
րել գասերը: Յե՛վ ներկայումս
եւ նրա մի շարք հին աշակերտ-
ներ՝ ծերացած, շատ ծերացած
մարդիկ սիրով և ճնորհակա-
լությամբ են հիշում նրան: Նա
աշխատում եր Սիմբիրսկում
չքավորների, գյուղացիների յե-
րեխաների համար ավելի շատ
դպրոցներ ստեղծել, չինայե-
լով իր ուժերն ու աշխատանքը:
Բոլորովին չինայելով իրեն, ա-

մեն տեսակի յեղանակներին դպրոցի զործերով շրջագայու-
թյուններ եր կատարում նահանգում:

Վլադիմիր Իլյիչի մայրը՝ Մարիա Ալեքսանդրովնան բժշկի աղ-
ջիկ եր, իր պատանեկութեան մեծ մասն անց եր կացրել գյու-
ղում, վորտեղ գյուղացիները շատ եյին սիրում նրան: Նա
լավ յերաժիշտ եր, լավ դիտեր յերաժշտությունը, Ֆրանսերեն,
գերմաներեն և անգլերեն լեզուները և յերեխաներին սովո-
րեցնում եր յերաժշտություն ու լեզուներ: Նա մեծ հավա-
քույթներ և զվարճություններ չեր սիրում: Իր ամբողջ ժա-
մանակն անց եր կացնում տանը, յերեխաների հետ, վորոնք
շատ սիրում ու հարգում եյին նրան: Բավական եր, վոր նա
իր հանգիստ և փաղաքշող ձայնով մի վորևէ բան ասեր, վոր
յերեխաները նրան իսկույն լսեյին: Իլյա Նիկողայիվիչը սիրում
եր իր հանգիստն անցկացնել նույնպէս ընտանիքում, յերե-
խաների հետ պարապելով, խաղալով կամ վորևէ բան պատ-
մելով:

Ընտանիքը, վորում մեծա-
ցել ե Վլադիմիր Իլյիչը, շատ
սիրով ապրող ընտանիք եր:
Իլյիչը յերբորդ յերեխան եր—
շատ աղմկարար, շատ չարած-
ճի, առույգ և ուրախ թուխ
աչքերով: Նա քայլել սկսեց հա-
մարյա միաժամանակ իր քույր
Ուլյայի հետ, վորը տարի ու կե-
սով նրանից փոքր եր: Քույ-
րը քայլել սկսեց շատ շուտ և
բոլորի համար աննկատելի կեր-
պով: Վալուդյան ընդհակառա-
կը քայլել սովորեց ուշ և յեթե
նրա քույրիկն աննկատելի կեր-
պով ընկնում եր, ինչպէս նրա
խնամատարն եր ասում՝ «չրբի-
կում եր» և ապա յերկու թաթիկներով հատակին հենվելով
ինքն իրեն բարձրանում եր, իսկ նա, Վալուդյան աւարյան
գլխի վրա եր ընկնում և ամբողջ տնովը մեկ սոսկալի աղմուկ
բարձրացնում: Բոլորը վազում եյին դեպի նա և մայրը վա-
խենում եր, վոր նա լուրջ կերպով կշարդի իր դուխը կամ
խենթուկ կլինի: Իսկ ներքին հարկում ապրող ծանոթներն ա-
սում եյին, վոր իրենք ամեն անգամ յսում են, ինչպէս Վա-
լուդյան գլխակոնճի յե տալիս հատակին: «Յե՛վ մենք ասում
ենք՝ նա կամ խելոք դուրս կգա կամ շատ թեթևամիտ»:

Նրանք յերկուսն ել շատ աշխուժ և առույգ յերեխա-
ներ եյին, սիրում եյին խաղալ ու վազվզել: Այդ բա-
նում հատկապես աչքի եր ընկնում Վալուդյան, վորը սովո-
րաբար հրամաններ եր տալիս քրոջը: Այսպէս, նա կատի-
պեր Ուլյային՝ մտնել դիվանի տակ, վորից հետո հրամայում եր՝
«դիվանի տակից քայլով մա՛րը»: Ամենուրեք առույգ ու աղ-
մրկարար Վալուդյան մինչևիսկ այն շուգենալի վրա, վորով նր-



Մարիա Ալեքսանդրովնա Ուլյանովա
(Վ. Ի. Լենինի մայրը)

բանց ընտանիքը գնում եր կաղանի նահանգը ամառն անց-
կացնելու, բարձրաձայն գոռում եր:

— Շողենայի վրա չի կարելի այդպես բարձր խոսել—
ասում եր նրան մայրը:

— Բայց չե՛վոր հենց ինքը շոգենային ել ե բարձր գո-
ռում,— առանց յերկար մտածելու վրա յեր բերում նույնպես
բարձր ձայնով Վալուդյան:

Յեթե Վալուդյան կամ Ուլյան շատ եյին շարությունն անում,
մայրը նրանց հանգստացնելու համար տանում եր հայրիկի
կաբինետը և նստեցնում մոմալաթով պատած թիկնաթոռի—
«սև թիկնաթոռի» վրա, ինչպես նրանք եյին անվանում: Նը-
բանք պետք ե պատիժը կրելով նստեցին թիկնաթոռում, մին-
չև վոր մայրը թույլ չտար նորից վերկենալ և խաղալու գնալ:
Մի անգամ Վալուդյային նստեցրել եյին «սև թիկնաթոռի» վրա:
Մայրիկին մե՛ը կանչեց և նա մոռացավ Վալուդյային, իսկ
հետո հիշելով, վոր յերկար ժամանակ ե նրա ձայնը չի լսվում,
նեքս նայեց կաբինետը: Վալուդյան շարունակում եր անշարժ
նստել իր «սև թիկնաթոռում», միայն անուշ քնել եր: Խա-
ղալիքներով նա քիչ եր խաղում, ավելի շատ կոտորատում եր
այդպիսիները: Քանի վոր մենք մեծերս աշխատում եյինք ար-
դելել նրան այդ բանն անելու, նա հաճախ թագնվում եր մե-
զանից: Հիշում եմ ինչպես մի անգամ, նրա ծննդյան ուրը,
գայակից ստացավ թղթից շինած մի յեռածի սահնակ վորպես
նվեր և կասկածելի կերպով նոր խաղալիքի հետ թագնվեց
ինչ վոր տեղ: Մենք սկսեցինք փնտռել և նրան գտանք մի
գուան հետևում: Նա կանգնել ու կամաց, ամբողջովին կենտ-
րոնացած վորորում եր ձիաների վտանները, մինչև վոր նրանք
մեկը մյուսի հետևից պոկ եյին գալիս:

ԳՆՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Վալուդյան կարգալ սովորեց մորից, դեռ հինգ տա-
րեկան հասակում: Յեվ նա, և նրա հետ միասին սովորող քույր
Ուլյան շատ եյին սիրում ընթերցանություն և սիրով կարդում
եյին մեր հոր ստացած բազմաթիվ մանկական գրքերն ու ամ-
սագրերը: Շուտով նրանք սկսեցին կարգալ և պատմվածքներ
ոռուսական պատմությունից, բերանացի սովորել վոտանավոր-
ներ: Վերջինս հատկապես ավելի շատ Ուլյան եր սիրում, վորը
գիտեր յերկար և դժվար վոտանավորներ և շատ պատկերավոր
կերպով բերանացի ասում եր:

Վալուդյան այն ժամանակ, յերբ նա յոթ-ութ տարեկան եր,
շատ սիրում եր «Ընչագուրկի յերգը» վոտանավորը, վորը նա
արտասանում եր մեծ վողեվորությամբ—տարվածությամբ:

Հարուստ հիմարը

փող ունի չի քնում,

Զքավորը ակորը, վոնց բազե

Յերգում ե, ուրախանում:

Իսկապես այդ նրան շատ եր դուր գալիս:

Վալուդիմիր Իլյիչի համար մանկության շրջանում առանձ-
նապես սիրելի գրքեր չկային: Նա սիրով կարդում եր «Ման-
կական ընթերցանություն» ամսագիրը:

Բավականաչափ կարդալուց հետո նա վազում եր քրոջ հետ
խաղալու: Նա, ինչպես ասացինք, սիրում եր ավելի շատ աղ-
մրկարար, շարժուն խաղեր:



Վաղելմիր Իսիէն իւր քույր Ուրա Իսիէնի հետ 1874 թ.

Ամառը նրանք վազում էին բակը, այգի, մազլցում էին ծառերի վրա, մեզ, յերկու մեծերիս հետ «Սև փայտիկներ» էին խաղում (ներկայումս կարծեմ այդ խաղը կոչվում է «Փայտիկներ չիկ-չիկացնող»): Վաղույան շատ եր սիրում այդ խաղը, իսկ ավելի ուշ—կրօկետը: Չմասնը նա սահնակի վրա սարից վար եր սահում, ձնասարը շինում էինք մեր բակում, բացի դրանից նա ընկերները հետ ձնագնդի յեր խաղում, իսկ ավելի ուշ արդեն վազում եր վոտքի սահնակով: Հիշում եմ, մի անգամ հասարակական սառցավազքատեղում,

վորը կազմակերպված եր Սիմբիրսկում, նա և ավագ յեղբայր Սաշան սահնակներով վազում էին բարձր սարերից, վորոնք այնքան բարձր էին ու սրընթաց, վոր նրանց վրայից մինչև իսկ սահնակով թռչելն առաջին հայացքից դժվար էր պատկերացնել: Սկզբում նրանք սարի ամենաբարձր թեք մասում պզգում էին, իսկ հետո կամաց-կամաց կանգնում էին և յերկար ժամանակ արդեն կանգնած սահում էին ներքև: Յետ նախանձով միայն նստում էյի նրանց, բայց չէյի վճռում նրմանվել նրանց: Ինձ թվում է, թե Վաղույայի համար սահելն ավելի հեշտ եր, քան Սաշայի, նա կարճահասակ եր, սնդակազմ և ամուր: Բայց վոտքի սահնակով սահելը Վաղույան ուշ սկսեց, գիմնազիայի աշակերտ յեղած ժամանակ:

Ինչպես արդեն ասել ենք, Վաղույան մեծ չարածձի յեր բայց նրա դրական կողմն այն եր, վոր նա ճշմարտախոս եր, չարածձու թյունն եր անում և վերջում միշտ խոստովանում:

Այսպես, հինգ տարեկան հասակում նա մի անգամ կոտրեց քրոջ քանոնը, վորը կես արշին եր, վերջոկների ու կես վերջոկների*) բաժանված. քույրը քանոնը հենց նոր եր նվեր ստացել: Կոտրելուց հետո ինքը վազեց քրոջ մոտ և այդ մասին հայտնեց նրան: Յերբ քույրը հարց տվեց թե ինչպես դա պատահեց — «ծնկիս գրի ու ջարդեցի», — վոտքը բարձրացնելով ցույց տվեց նա թե ինչպես է կոտրել:

— Լավ է վոր նա վոչինչ գաղտնի չի անում, — ասում եր մայրը:

Իմիջի այլոց նա մի անգամ պատմեց, վոր Վաղույան ելի այդպիսի մեղք է գործել նա պիրոգ պատրաստելու համար խոհանոցում խնձոր եր մաքրում, խնձորի կեղեվի մի կույտ սեղանի վրա ընկած եր: Վաղույան պտտվում եր սեղանի շուրջը և խնդրում իրեն տալ կեղեվները: Մայրն ասաց, վոր կեղեվը չեն ուտի: Այդ ժամանակ մեկը խոսեցրեց մորը և յերբ նա նորից շուռ յեկավ իր աշխատանքը շարունակելու, Վաղույան արդեն խոհանոցում չեր: Նա նայեց դեպի պարտեզը և տեսավ է ինչպես Վաղույան նստել է այնտեղ և իր առաջ պարտեզի սեղանի վրա դրված է խնձորի կեղեի մի կույտ ու նա արագ կերպով ուտում է: Յերբ մայրը նրան հանդիմանեց, նա լաց յեղավ և խոստացավ այլևս այդպիսի բան չանել:

— Յե՛վ իսկապես, — ասում եր մայրը, — նա այլևս գաղտնի կերպով վոչինչ չի վերցնում:

*) Այն ժամանակվա չափերը:



Վ. Ի. Ուլյանովը գիմնազիայում

Մի ուրիշ անգամ, յերբ նա ութ տարեկան էր, նա թագ-
ցըրեց իր մի դժբախտութիւնը: Հայրը նրան և մեծ վորդուն
առաջին անգամ իր հետ տարել էր Կազան, վորպեսզի այն-
տեղից ել գնան Կոկուշկինո գյուղը՝ մորաքրոջ մոտ: Կազա-
նում, հորաքրոջ տանը, նա հորաքրոջ տղաների և աղջիկների
ու հարազատների հետ վազվզելիս, խաղալիս պատահմամբ դի-
պով փոքրիկ սեղանին, վորի վրայի ապակե ջրամանը հատա-
կին ընկավ ու ջարդ ու փշուր յեղավ: Ներս մտավ մորաքույ-
րը:

— Յերեխաներ, ով ջարդեց ջրամանը,—հարցրեց նա:

— Յես չեմ, յես չեմ ջարդել,—ասում էր նրանցից յու-
րաքանչյուրը:

— Յես չեմ ջարդել,—ասեց և Վալոդյան:

Նա, վոր այնքան լավ չեր ճանաչում մորաքրոջը, օտար սեն-
յակում վախեցավ խոստովանել: Նրան, մեղանից ամենափոք-
րին դժվար էր ասել «յես», յերբ քոլոր մյուսներն ասում
էին ավելի հեշտը՝ «յես չեմ ջարդել»: Այսպիսով դուրս յե-
կավ, վոր ջրամանն ինքն իրեն ջարդվեց: Անցավ յերկու, յե-
րեք ամիս: Վալոդյան վաղուց վերադարձել էր Կոկուշկինոից և
դարձյալ ապրում էր Սիմբիրսկում: Յեվ անա մի անգամ, յե-
րեկոյան, յերեխաներն արդեն պառկեցին և մայրը գիշերը նը-
րանց մահճակալների մոտով անցնելով մտեցավ Վալոդյային,
նա հանկարծ լաց յեղավ:

— Յես մորաքույր Անիային խաբեցի,—ասաց նա հեկեկա-
լով,—յես նրան ասացի, վոր ջրամանը յես չեմ ջարդել, մինչ-
դեռ այդ յես եմ ջարդել:

Մայրը նրան միխիթարեց ասելով, վոր նա մորաքույր Անի-
ային նամակ կգրի և նա անկասկած նրան կնսերի: Յեվ Վալոդյան
դրանով ցույց տվեց, վոր սուտն ատելի յե իր համար, վոր
ոտարի տանը վախենալով խաբել է, նա չկարողացավ հան-
գըստանալ, մինչև վոր չխոստովանեց:

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

Ինչ ու կես տարեկան հասակում Վալոդյան ընդուն-
վեց գիմնազիայի առաջին դասարանում: Դրա համար յերկու
ձմեռ նրան պատրաստում էին առաջ մի ուսուցիչ, իսկ առա-
ջադարձային դպրոցի ուսուցչուհիներից մեկը, մոր շատ մոտ էր
մեզ: Ուսուցչուհին շատ լավ դասատու յեր համարվում: Վալո-
դյան նրա մոտ էր վաղում մեկ, իսկ մեկ-մեկ ել յերկու ժա-
մով, սովորաբար ժամը 8-ից 9-ը դասի որերին կամ յերբ ա-
զատ էր, յերբ դպրոցում տեղի էին ունենում կրօնի, ձեռա-
գործի կամ նկարչութայն դասեր: Նա մանկութունից վերին
աստիճանի արագաշարժ լինելով, ուղղակի թռչում էր դասի:

Հիշում եմ, մի անգամ, աշնանային մի ցուրտ առավոտ,
մայրը ցանկանում էր նրան վերաբերու հագցնել, բայց յերբ նա
վերաբերուն տարավ դեպի Վալոդյան՝ նա արդեն չկար: Մայրը
նրան հետևից շուռ յեկավ վորպեսզի հետ կանչի, բայց նա
արդեն շուռ էր յեկել փողոցի անկյունը:

Նա հեշտ ու լավ էր սովորում: Նա լավ ընդունակութիւն-
ներ ել ուներ. հայրը նրան սովորեցրել էր, ինչպես և մեծ
յեղբորը և քրոջը, համբերութեամբ նստել, պարապել և առա-
ջադրութիւնը ճշտութեամբ ու ուշադիր կատարել:

Դեռ հիշում եմ, ուսուցիչները նրան ասում էին, վոր
Վալոդյային շատ է ոգնում այն բանը, վոր նա դասարանում
շատ ուշադիր լսում է դասի բացատրութիւնը: Իր լավագույն
ընդունակութիւններով հանդերձ նա դասարանում սովորա-
բար հիշում էր նոր դասը և սանը նա միայն մի քիչ կրկնում
էր: Դրա համար ել հենց վոր յերեկոյան մենք մեծերս մեր
աշխատանքներով նստում էինք սեղանատան մեծ սեղանի



Ուլյանովների ընտանիքի խմբանկարը—1879 թ.

շուրջն ընդհանուր լամպի լույսի տակ, մինչդեռ Վալոդյան արգեն իր դասերը սովորել պրծել եր, սկսել շատախոսութուն, շարութուն անել, ջղախնայանել փոքրերին և խանգարել մեզ։ Իսկ բարձր դասարաններում այդ տարիները շատ դասեր էին տալիս։

«Վալոդյա, բավական ե»։ «Մայրիկ, Վալոդյան չի թողնում պարապենք»։ Բայց Վալոդյային ձանձրացրել է ուղիղ նստելը և նա շարութուններ է անում, անիվ է զլորում։

Մեկ-մեկ մայրը փոքրերին դահլիճ եր տանում, վորտեղ դաշնամուրի վրա նրա նվագակցությունը յերգում էին մանկական «Դուսելուկ» կոչված յերգերից։

Վալոդյան սիրում եր յերգել և նրա լսողութունն ու ընդունակութունները յերաժշտության նկատմամբ լավ էին։ Բայց այդ բանում ել նա հանդարտ չեր։ Փոքր յեղբայր Միտյան յերեք-հինգ տարեկան հասակում շատ եր տրտում և առանց լաց լինելու չեր կարողանում յերգել «Այծիկ» յերգը։ Նրան աշխատում էին սովորեցնել, համոզել։ Հենց վոր նա ուժ եր հավաքում և սկսում եր յերգել առանց աչքերը թարթելու, ամենատխուր տեղում Վալոդյան դառնում եր զեպի յեղբայրը և սարսափելի արտահայտություն տալով զեմքին՝ յերգում—«հարձակեցին այծիկի վրա մոխրագույն գայլերը»։ Միտյան ամբողջ ուժով աշխատում եր իրեն պահել։ Բայց շարաճին չեր դադարում, ավելի քան տխուր ձայնով, յեղբորը փորձելու համար շարունակում եր յերգել—«Տատիկին թողեցին յեղջուրներն ու տոսիկները»։ Նա յերգում եր մինչև փոքր Միտյան այլևս չհամբերելով ուժեղ կերպով լաց եր լինում։ Հիշում եմ, վոր յես դրա համար խոովեցի Վալոդյայի հետ, ջղախանալով այն բանից, վոր նա փոքրիկի հետ այդպիսի կատակներ է անում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՈՐԳ

Յերբ հայրիկը տանն եր լինում, նա սովորաբար մեզ, մեծերիս ոգնության եր գալիս, տանում եր Վալոդյային իր մոտ, կաբինետ և ստուգում նրա դասերը: Վալոդյան սովորաբար բոլորը գիտեր: Այդ ժամանակ հայրիկը սկսում եր նրան հարցնել հին լատինական խոսքեր, վորոնք գրված եյին ամբողջովին նրա տետրում: Յեվ Վալոդյան պատասխանում եր առանց կանգ առնելու: Յեվ յեթե հայրիկը տրամադրություն չեր ունենում նրան զբաղեցնելու ուրիշ բանով, որինակ շախմատով, ապա սեղանատան տիրոզ լուությունը յերկար չեր տևում:

Իսկ մեր հայրիկը սիրում եր շախմատ և այդ սերն անցել եր բոլոր յեղբայրներին: Նրանցից յուրաքանչյուրն ուրախ եր, յերբ հայրը նրանց կանչում եր իր կաբինետը և շարում եր շախմատը:

Շախմատի Ֆիզուրները, վոր շինել եր հայրս Նիժնե-Նովգորոզում, խառատի արհեստանոցում, մինչև մեր Սիմբիրսկ տեղափոխվելը շատ լավ խնամում եր և հայրս ու մենք հիանում եյինք այդ խնամքի վրա: Մենք բոլորս սովորեցինք շախմատ խաղալ և հետագայում, յերբ Վլադիմիր Իլյինն ապրում եր արտասահմանում, վորպես հեղափոխական-փախստական՝ մայրիկըն այդ շախմատի Ֆիզուրները նրան ուղարկեց: Բայց Կրակովում, համաշխարհային պատերազմից առաջ, ուր նրան ձերբակալեցին և ազատվելուց հետո ստիպված եր այդ տեղից հեռանալ, նա իր բոլոր իրերի հետ նաև շախմատն ել այնտեղ թողեց, վորը դժբախտաբար կորավ:

Վալոդյան շախմատ եր խաղում հայրիկի և յեղբայր Սաշայի հետ:

Մենք աղջկերքս քիչ եյինք խաղում: Հիշում եմ միայն մի աշուն, յերբ մենք բոլորս, հայրիկը և մենք յերեք մեծերս շատ եյինք հափշտակվել շախմատով ու նստեցինք մինչև ուշ գիշեր: Բայց յերբ սկսվեցին կանոնավոր պարապմունքները, մենք ստիպված յեղանք թողնել այդ խաղը, վորը սովորաբար յերկար եր տևում:

Ամեն ինչին լուրջ վերաբերվելով Վալոդյան սկսեց ուսումնասիրել և շախմատը, ինչպես այդ անում եր մեծ յեղբայրը: Ուսումնասիրում եր հատուկ ձեռնարկներով և ավելի ուշ նա սկսեց շատ լավ խաղալ: Այդ խաղը զարդարում եր նրա կյանքը գավառում, գյուղում ստիպված ապրելու ժամանակ, իսկ հետագայում ել՝ աքսորում և եմիգրացիայում եղած ժամանակ: Յերբ նա գիմնազիայի աշակերտ եր, շատ եր սիրում շախմատ խաղալ Սաշայի հետ: Յեվ վոչ միայն շախմատ խաղալ: Նա սիրում եր խաղալ այն ամենը, ինչ խաղում եր Սաշան, անել այն ամենը, ինչ անում եր նա: Նա շատ եր սիրում իր մեծ յեղբորը և նրան եր նմանվում ամբողջութամբ: Ի՞նչի մասին ասես չեյին հարցնում Վալոդյային՝ ի՞նչպես նա կցանկանար խաղալ, կգնա՞ զբոսանքի թե վոչ, կա՞թով թե յուղով յեփեն կաշան, նա այդ հարցերին իսկույն և յետ չեր պատասխանում, խորամանկաբար նայում եր յեղբորը: Իսկ մենք յերկուսս ծիծաղում ենք նրանց վրա: Բայց ծաղրը չեր ոգնում և Վալոդյան պատասխանում եր—«Յես այն եմ ուզում, ինչ Սաշան ե ուզում»: Բայց վորովհետև Սաշան շատ լուրջ եր և մտածկոտ, դեպի իր պարտականությունները խիստ ուշադիր վերաբերվող տղա, ապա Վալոդյայի համար նրան նմանվելը ոգտակար եր. նա մշտապես իր առաջ տեսնում եր կենտրոնացած ուշադրություն, տրված առաջադրությունն ուշադիր և ճիշտ կատարելու, խոշոր աշխատունակության լավագույն որինակ:

Այսպիսով հոր և մոր որինակը Վալոդյայի համար միշտ կրկնվում եր Սաշայի մեջ և վորովհետև հասակով վորոշ շա-

փոփ մեծ յերեխաների հոգեբանութիւնը մօտ է հասակավոր-
ների հոգեբանութեանը, ապա յես կարծում եմ, վոր Սաշայի,
շատ սիրելի յեղբոր որինակը Վալոդայի համար հսկայական
նշանակութիւն ունի:

Սաշան վոչ միայն աշխատանքի, այլև մարդկանց նկատ-
մամբ նրա ունեցած վերաբերմունքով հանդիսանում էր մեզ
բոլորիս համար վորպես որինակ, նա իր զգայուն, փաղաքշող,
միևնույն ժամանակ հաստատուն և արդարացի բնավորու-
թյամբ ոգավում էր մեր բոլորիս բացառիկ սիրով: Վալոդայն
մանկութիւնից շատ տաքարյուն էր և Սաշայի որինակը, նրա
մշտական ուղղամտութիւնն ու խոշոր կայունութիւնը մնա-
ցած բոլոր յերեխաների համար, այդ թվում հատկապես Վա-
լոդայի համար՝ խոշոր նշանակութիւն ունեւր: Սկզբում նման-
վելով մեծ յեղբորը, Վալոդայն հետագայում գիտակցարար
սկսեց կովել այս պակասութեան դեմ և չափահաս տարիներ-
ում մենք բոլորովին, կամ համարյա բոլորովին չեյինք նկա-
տում նրա մեջ շատ տաքարյունութիւն: Իր հետ պայքարելը
և ինքն իր վրա աշխատելը մենք տեսնում էյինք նրա մեջ
նաև իր աշխատունակութիւնը զարգացնելու նկատմամբ:

Չնայած վոր մենք ասել ենք, վոր նա իրեն տրված բոլոր
առաջադրութիւնների կատարմանն ուշադիր էր վերաբերվում
և լավ սովորում էր, բայց շնորհիվ նրա աչքի ընկնող ընդու-
նակութիւններին այդ բանը նրանից վոչ մի աշխատանք չեր
պահանջում, անհրաժեշտութիւն չկար լարել ուժերը, մշակել
իր մեջ աշխատունակութիւնը:

Իր և բոլոր շրջապատողների հետ բացառիկ գիտակցու-
թյամբ և խստութեամբ վերաբերվելով՝ Վալոդայն ինքը նը-
կատել էր իր այդ թերութիւնը և մի անգամ բացառիկ համ-
բերատարութեամբ ունկնդրելով դաշնամուրի վրա քրոջ Ոլյայի
վարժութիւններին, նա ինձ ասաց—«Ահա թե ում աշխատունա-
կութեանը կարելի յե նախանձել»: Յե՛վ նա սկսեց իր մեջ աշ-
խատունակութիւն մշակել, աշխատունակութիւն, վորը հայտնի
դարձավ արդեն նրա յերիտասարդ տարիներին—համարաբանե

ավարտելու տարիներին, աշխատունակութիւն, վորով բոլորը
զարմանում էյին, յերը նա արդեն չափահաս մարդ դարձավ:

Դեռ մանկութեան տարիներում յես ընդհանրապես Վալո-
դայի մեջ նկատել էյի շրջապատի վերաբերմամբ քննադատա-
բար մտենալու ունակութիւն: Այդ աշխուժ, չարաճճի, կար-
ծես թեթևամիտ յերեխան, վորը հեշտութեամբ նկատում էր
ուրիշների ծիծաղելի, թույլ կողմերը, վորը դեմ չեր ջղա-
նացնել, ծիծաղել, գործնականում նկատում էր վոչ միայն
այդ: Նա, ինչպես մենք ցույց տվինք Ոլյայի յերաժշտութեան
որինակով, մատնանշում էր նույն լավազույն կողմերը և ան-
պայման այն նպատակով, վոր այդ դրական կողմերը յուրացնի
—այդպես է արդո՞ք ինքը վարվում, չկա արդո՞ք ուրիշների
արածի մեջ մի բան, վորը կարողանար նա ընդորինակել:

Ինձ թվում է, վոր վերջինս Վալոդայի ուժեղ կողմերից
մեկն էր:

Իմ հիշողութեան մեջ մի յերկու դեպք է մնացել, վորոնց
վերաբերմամբ նա ասում էր—«Յես մտածել եմ, կրավակա-
նանա՞ր արդո՞ք իմ արիւթիւնը դրա համար, կարծես թե
վոչ»:

Դեռ մանկութեան տարիներում նա չեր սիրում պարծեն-
կոտութիւնը, գոռոգութիւնը, ավելի ուշ տարիներում, այդ
վատ հատկութիւնները տանել չեր կարողանում և այդ հատ-
կութիւններից նա նախազգուշացրել էր յերիտասարդութեանը
Յերիտմիութեան III-րդ համագումարում արտասանած իր ճա-
ռում: Ծիշտ է, մեր հայրն էլ չեր սիրում պարծենկոտութիւնը
և չնայած վոր մենք բոլորս, հատկապես Վալոդայն, դպրո-
ցում աչքի էյինք ընկնում, յերեք չեր գովաբանում, այլ
ուրախանալով մեր հաջողութիւններով աշխատում էր մեզ
խորխուսել ավելի մեծ հաջողութիւնների հասնելու համար:

59634-66



ԳԼՈՒԽ ԿՆԵՐՈՐԳ

Գրիմնազիայից վերադառնալով, Վալոդյան հորը պատմում էր այն մասին, թե ինչ է յեղել դասի ժամանակ, ինչ են նրան հարցրել և նա ինչպես է պատասխանել: Վորքան վար սովորաբար կրկնվում էր միևնույն բանը—հաջող պատասխաններ, լավ թվանշաններ, ապա յերբեմն Վալոդյան հենց հոր կաբինետի մոտից, միջանցքային սենյակից, վորով նա գընում էր վերև՝ իր սենյակը, արագ քայլերու ժամանակ ղեկուցում էր՝ «հունարենից—հինգ, գերմաներենից—հինգ»: Այս պատկերը այնքան պարզ է իմ աչքերի առջև. յես գտնվում եմ հորս կաբինետում և վորսում եմ այն բավական ժպտաները, վորոնցով հայրս խոսում էր մայրիկի հետ, աչքերով հետևելով գրիմնազիստական վերարկույով ջլապինդ Փիգուրին, վորի գլխարկի տակից ցրված են շեկլիկ մազերը, վորոնք արագությամբ փայլում ու անցնում են դռան մոտից: Առարկաները իհարկե փոխվում էյին: Մեկ-մեկ հնչում էր՝ «լատիներենից—հինգ, հանրահաշվից—հինգ», բայց հետևանքը մընում էր նույնը, սովորաբար Վալոդյան ստանում էր մի թվանշան—5:

Այդ տարիները հայրիկն ասում էր մայրիկին, վոր Վալոդյային ամեն ինչ հեշտությամբ է հաջողվում և ինքը վախենում է, վոր Վալոդյայի մեջ չի կոփվում աշխատունակությունը: Այժմ մենք գիտենք, վոր այդ վախը ավելորդ էր, վոր Վալոդյան կարողացավ իր մեջ կոփել արտակարգ աշխատունակություն:

Բայց նա սիրում էր և ծաղրել և ծիծաղել: Յերբ հավաքվում էյին նրա հասակակիցները կամ ընտանիքում փոքրերի

հետ (Ոլյա և Միտյա) նա բոլոր խաղերի ղեկավարն էր: Յեվ ամեն ոք լավում էր նրա ծիծաղը, անսպառ պաշարի հանաքները և պատմությունները:

Քաղաքի դպրոցի ուսուցչուհին և մեր ընտանիքի մոտիկ ծանոթ Վերա Վասիլյեվա կաշկանդամովան, իր հիշողություններում պատմում է, թե ինչպիսի ուրախ տրամադրություն էր տիրում մեզ մոտ, յերբ ամբողջ ընտանիքը նստում էր յերեկոյան թեյի: «Յեվ ամենից ավելի բարձրաձայն,—ասում է նա,—հնչում է Վալոդյայի և նրա քույր Ոլյայի ձայնը: Միայն լավում էր նրանց ուժեղ ձայնն ու վարակիչ ծիծաղը»: Նրանք պատմում էյին գրիմնազիայում պատահած զանազան դեպքերի մասին, զանազան հանաքների, բանասարքումների և չարությունների մասին: Հայրիկը նույնպես դեմ չեր կատակներ անել մեզ հետ, շատախոսել, կաբինետում թողնելով իր լուրջ գործերը, նա պատմում էր իր դպրոցական տարիներից, իր ընկերների հետ պատահած զանազան դեպքերը, կատակներ էր անում, դպրոցական կյանքից անեկդոտներ էր պատմում: «Բոլորը ծիծաղում են, բոլորն էլ ուրախ են: Յեվ մարդ լավ էր զգում իրեն այս սիրալիք ընտանիքում»—գրում է կաշկանդամովան:

Վալոդյայի մի քանի չարածնությունները մնացել են իմ հիշողության մեջ: Մեզ մոտ էր յեկել մորաքրոջս աղջիկը—բժշկուհի: Այդ ժամանակներում բժշկուհիները հազվագյուտ էյին: Մորաքրոջ աղջիկը առաջիններից մեկն էր: Նստել էր զահլիճում ու խոսում էր հայրիկի ու մայրիկի հետ: Դահլիճի դռան մոտ լավում է ծիծաղ և շշուկ: Ներս է վազում Վալոդյան և առույգ կերպով ղիմելով հյուրին՝ ասում է.—

— Անյուտա, յես հիվանդ եմ, բժշկիր ինձ:

— Ինչո՞ւ յես հիվանդ, — ներողամտաբար հարցնում է յերիտասարդ բժշկուհին, տեսնելով վոր տղան չարածնություն է անում:

— Ինչքան էլ ուտում եմ, յերբեք չեմ կշտանում, միշտ քաղցած եմ մնում:



Վ. Ի. Ուլյանովը զինադիպի վերջին դասարանում

— Հապա գնա խոհանոց, կտրիր մի մեծ կտոր հաց, լավ աղ ցանիր ու կեր:

— Յես արդեն փորձել եմ, վոչինչ չի ոգնում:

— Գնա յերկրորդ անգամ ընդունիր այդ դեղը, վորից հետո յերևի կոգնի:

Վալոդյային մնում էր միայն յես նահանջել:

Վալոդյան սիրում էր և յերաժշտութուն: Մայրիկը նրան ցույց էր տալիս սկզբնական վարժութունները, թույլ էր տալիս նրան մի քանի մանկական հասարակ յերգեր և պիեսաներ նվագել. հետագայում նա սկսեց աշխույժ ու առանձին զգացմունքով նվագել: Մայրիկը հետագայում ափսոսում էր, վոր նա թողեց յերաժշտութունը, վորովհետև Վալոդյան մեծ ընդունակութուններ էր հանդես բերել:

Փոքրիկ Վալոդյան սիրում էր ճնճողակներ վորսալ և ընկերների հետ դրա համար թակարդներ էր դնում, իսկ ավելի վաղ ժամանակներում նա սիրում էր գնել ճնճողակները և բաց թողնել: Հին ժամանակներում սովորութուն կար ճնճողակներին ազատ արձակել մարտի 25-ի ավետման տոնին: Յե՛վ Վալոդյան սիրում էր այդ սովորութունն ու մորից փող էր խնդրում, վորպեսզի ճնճողակներ գնի և ապա բաց թողնի: Նրա վանդակում մի անգամ կարմրալանջ կար: Զգիտե՛մ նա բբոնել էր թե գնել նրան, կամ վորևէ մեկը նվիրել էր, միայն հիշում է՛մ, վոր կարմրալանջն ապրեց ջատ կարճ ժամանակ, ախրեց, փշաքաղվեց և մեռավ: Զգիտե՛մ թե դա ինչպես պատահեց, Վալոդյան զրանում մեղավոր էր թե վոչ, չէր կերակրել արդյո՞ք կարմրալանջին:

Հիշում եմ միայն, վոր մեկը նրան հանդիմանում էր դրանում և հիշում եմ թե ինչպես նա լուրջ, կենտրոնացած հայացքով դիտեց մեռած կարմրալանջին և հետո վճռականորեն ասաց. — Մյլևս յերբեք թռչուններին վանդակում չեմ պահելու: Յե՛վ իսկապես հետագայում նա այլևս վանդակում թռչուն չպահեց:

Նա պազուս էր Միմբիրսկու Սվյազու գետի վրա կարթով ձուկ վորսալու և նրա ընկերներից մեկը պատմում է հետևյալ դեպքի մասին: Տղաներից մեկը նրան առաջարկեց ձուկ վորսալ մոտակա առվում ասելով, վոր այնտեղ լավ ձուկ կարելի յե վորսալ: Նրանք գնացին, բայց Վալոդյան թեքվեց ջրի վրա, գլորվեց առուն, սղմոս հատակը սկսեց բաշել նրան: «Ձգիտեմ ինչ կլինեք վերջը,—պատմում էր այդ ընկերը,—յեթե մեր գոռոցը չլսեր ափում գանվող գործարանի բանվորներից մեկը և վրա չհասներ ու Վալոդյային չհաներ: Դրանից հետո մեզ թույլ չտվին Սվյազա գետը գնալու»:

Բայց մանկություն ժամանակ զբաղվելով թռչուններ ու ձուկ վորսալով, գրիմազիայի ավելի բարձր դասարաններում Վալոդյան վոչ մեկով և վոչ մյուսով չտարվեց. նա վոչ ձուկն էր վորսում և վոչ էլ թռչունների համար թակարդներ գնում: Ամառները, յերբ նրա մեծ յեղբայր Սաշան համալսարանից վերադառնում էր նավակով, Վալոդյան սովորաբար չէր գնում նրա հետ նավակով, այլ Սաշային ուղեկցում էր փոքր յեղբայր Միտյան, վոր շրջագայությունների ժամանակ Սվյազա գետի վրա ինչ վոր ճիճուներ և ջրային կենդանիներ վորոնի: Սաշան զբաղվում էր բնապատմական գիտություններով դեռ գրիմազիայի աշակերտ յեղած ժամանակ, իսկ համալսարանում նա մտավ բնագիտական ֆակուլտետ և ամառվա ամիսներին զբաղվում էր հետախուզություններով, նյութեր էր պատրաստում իր աշխատությունների համար:

Վալոդյան չէր սիրում բնական գիտությունները: Գրիմազիայում նա հետաքրքրվում էր լատիներեն լեզվով, կլասիկների ընթերցանություններ, պատմություններ, աշխարհագրություններ, սիրում էր յերկար գրել և այդպիսիները շատ լավ էր գրում: Նա չէր սահմանափակվում դասադրքերով և ուսուցչի պատմածներով, վորպեսզի յերկեր գրեր, նա վերցնում էր գրադարանից գրքեր և նրա գրածները լինում էին հիմնավորված, թեման լավ մշակված և շարադրված գրական լեզվով:

Գրիմազիայի գիրեկտոր Կերենսկին (Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ յեղած ժամանակավոր կառավարությունը

գլխավորող Ա. Ֆ. Կերենսկու հայրը), վորն այդ ժամանակ բարձր դասարանում լեզու յեր դասավանդում, շատ էր սիրում Վալոդյային, միշտ գովում էր նրա աշխատանքները և նրան միշտ լավ գնահատականներ էր տալիս:

Վալոդյան չէր սիրում նաև այն զանազան աշխատանքները, վորոնցով տղաները սովորաբար տարվում էին: Այսինքն մանկության ժամանակ ինչպես մենք բոլորս, նա յել էր շինում զանազան խաղալիքներ ու տոնածառ զարդարում, վորը մենք բոլորս շատ էինք սիրում և վորի համար սովորաբար ամեն ինչ մեր ձեռքով էլինք պատրաստում. սակայն բացի այդ նախնական աշխատանքներից, յես յերբեք չեմ հիշում, վոր զբաղվեր վորևէ վարպետություն, հյուսնություն անելով: Նա չէր զբաղվում նաև տղաների համար այնպիսի սիրելի գործով, ինչպիսին է փայտ կտրելը, տաշելը, վորում լավ վարպետ էր նրա մեծ յեղբայրը:

Ձմեռային կամ ամառային արձակուրդների ժամանակ, յերբ ազատ էր լինում դասերից՝ նա կամ կարդում էր, սիրում էր արևածաղիկ ուտել, կամ վազվզում էր, զբոսնում, ձմեռը սահնակով ման գալիս, ամառը կրոկետ էր խաղում, կամ լողանում: Նա արկածախնդրական պատմվածքներ կարդալ չէր սիրում, այլ, հիշում եմ, տարվում էր Գոգոլի գրվածքներով, իսկ ավելի ուշ՝ Տուրգենևով, վորին կարող էր կարդալ և կարդալ մի քանի անգամ: Ինչպես Սաշան և Ույան ընկերներ ունեյին, Վալոդյան գրիմազիական տարիներում առանձնապես մոտիկ ընկերներ չունեք: Մեր ընտանիքում նրա մոտ շատ քչերն էլին գալիս, բայց դասարանում նրա վերաբերմունքը դեպի ընկերները լավ էր, նա ոգնում էր նրանց աշխատանքների ժամանակ, բացատրում էր այն, ինչ նրանք չէին հասկանում, ուղղում էր թարգմանություններն ու շարադրությունները, իսկ այն ընկերների համար, վորոնք զժվարանում էին, մեկ մեկ ինքն էր գրում: Նա պատմում էր ինձ, վոր նրան հետաքրքրում էր շարադրություն գրել այնպես, վոր ընկերը և լավ թվանշան ստանա և չսկատվեր, վոր մի ինչ վոր ուրիշն է գրել, չի՛ացվի, վոր ին-

քը՝ Վալոդյան ե գրել: Նա անհասկանալի տեղերը ընկերներին բացատրում եր դասամիջոցների ժամանակ, ինչպես նրա յեղբայր Սաշան, նա ևս գիմնազիա յեր գալիս յերբեմն կես ժամ առաջ, վորպեսզի բացատրի մյուս աշակերտների համար դժվար տեղերը—հունարեն կամ լատիներեն լեզվից, կամ բացատրի վորևե զժվար թեորեմա: Ամբողջ դասարանը հույսը գնում եր Վալոդյայի վրա՝ առաջադեմ լինելով, նա մյուսներին ել իր հետևից եր տանում:

ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

Մեր ընտանիքը Սիմբիրսկում ապրելիս շարունակ տեղափոխվում եր անհարմար սենյակներ, մինչև այն, յերբ հայրս Մոսկովսկայա փողոցի վրա գնեց իր փայտյա տունը: Ներկայումս այդ տան մեջ տեղավորված ե Լենինի թանկարանը, այսինքը վողջ տունը, բոլոր սենյակները, կահկարասիքը վերադասավորված են հնարավորին չափ այնպես, ինչպես յեղել են Լենինի մանկության ժամանակ: Այդ տունը մի հարկանի յեր, վերնատնով, վորտեղ մանկական սենյակներն եյին տեղավորված: Վալոդյայի սենյակը Սաշայի սենյակի կողքին եր՝ տան մի ծայրում, իսկ իմ և յերեք փոքրերի սենյակը մյուս ծայրում, մյուս սանդուխքով:

Մենք այդ տունը տեղափոխվեցինք, յերբ Վալոդիան ութը տարեկան եր և այսպիսով 5 տարի, մինչև 5-րդ դասարանը, նա սովորել ե Սաշայի հետ սերտ մտախկությամբ, նրանից սովորել ե գործին վերաբերվել լըջորեն, նա ներկա յե յեղել Սաշայի կատարած բնագիտական փորձերին, տարվում եր այն գրքերով, վոր Սաշան եր կարդում և նրանից խորհուրդներ հարցնում:

Տան հետևում կար յերկար կանաչազարդ բակ, վորտեղ մեզ համար շինվեց „հսկայի քայեր“ խաղը, իսկ հետագայում բավական մեծ պարտեզ, վորը դուրս եր գալիս արդեն մյուս կողմից դեպի Պոկրովսկայա փողոցը:

Ներկայումս այդ պարտեզը մեծ մասամբ կտրտված ե, իսկ Պոկրովսկայա փողոցի վրա դուրս յե գալիս արդեն ուրիշ մի քարաշեն տուն*)

*) Այդ տան մեջ ներկայումս տեղավորված ե յերկաթուղային ֆաբրիկայի փոքր 1931 թվին անվանվել և Բյա Նիկ. Ուլյանովի անունով, իսկ գալոցի աշակերտներն ու պիտներները, վորոնք կցված են Լենինի անվան թանկարանին, սկսեցին վերականգնել պարտեզը (Ս. Ուլ.):

Այսպիսով նեղ և յերկար տեղամասը ձգվում էր մի ամբողջ փողոցով: Պարտեզի պարսպի վրա փոքր դռնակ կար, վորից ձմեռը մենք դուրս ելինք գալիս սահնակներով ման գալու, իսկ ամառը Սվյազա գետում լողանալու: Մենք մի մասնավոր լողարանին վճարում էլինք առավոտյան և յերեկոյան լողանալու համար, այդ ժամին պետք էր լինում լողանալ յերկու հերթով—հայրը տղաների հետ և մայրը աղջիկներին հետ: Հիշում եմ ինչպես ընտանիքի յերկու խմբերը կես ճանապարհին դեպի Սվյազա գետը տանող մեծ մասամբ խոտով ծածկված Պետրովսկայա փողոցի բլրակի լուռ վայրեջքի վրա հանդիպում էլին:

Պարտեզում մեծ մասամբ պտղատու ծառեր կային. այնտեղ կային խնձորենի, կեռասկնի, մրգերի տարբեր տեսակի թփեր: Կար և լավ ծաղկանոց: Այդ բոլորը վարում էր մայրիկը, վորը շատ էր սիրում այգեգործութունը:

Բանջորական ձեռքեր, վորոնք մեկ մեկ վարձվում էլին միայն աշնանային դժվար աշխատանքները կատարելու խնձորենու բուկը տալու և այլ դժվար աշխատանքներ կատարելու համար, ընդհանրապես չէլին գործադրվում: Մենք բոլորս ոգնում էլինք:

Հիշում եմ ամառային յերեկոները, չոր ու շոգ օրերից հետո մենք բոլորս ցնցուղներով, դուլերով, ամեն տեսակի ամաններով, վորոնցով կարելի էր շուր վեղցնել շրհորից, շուր էլինք քաշում, շրջում այգու աղոսներով և յետ վերադառնում: Հիշում եմ, ինչպես Վալոդյան ցնցուղը ձեռքին պարտեզից արագ սլանում էր: Մենք ինչքան ցանկանում ուտում էլինք պտուղներ ու մրգեղեն: Բայց իհարկե մենք ուտում էլինք վոչ թե անկարգ ու անկանոն, այստեղ էլ վորոշ կարգապահութուն կար: Այսպես, յերբ խնձորները հասնում էլին, մեզ թույլատրվում էր ընտրել և ուտել այսպես կոչված «կաթած» պտուղը, վորը գետին էր ընկնում, բայց ծառերից մենք չէլինք պոկում: Ապա վորոշ կարգ կար, թե վոր ծառերից պետք է քաղել, շուտ փչացող տեսակները առաջ պետք էր ուտել և վոր ծառերից հավաքել ձմռան համար վարենիաներ պատրաստելու: Յեվ դրա հետևանքով աշնան ամիսներին մենք

լիառատ ուտում էլինք և մեզ բավարարում էր միքզը նաև ձմռան ամիսներին:

Հիշում եմ, յերբ մենք բոլորս գայրացել էլինք մի հյուր աղջկա վրա, վորը փորձում էր մեզ ցույց տալ իր քաջութիւնը, վագելով կծում էր ծառի վրայի խնձորը և արշավում առաջ: Այդպիսի խուլիգանութիւնը մեզ համար խորթ էր ու անհասկանալի: Այսպիսի վերաբերմունք ու կարգ կար և պտուղների նկատմամբ, առաջ մեզ ցույց էր տրվում յելակիկի և մալինայի կամ կեռասի թփերն ու ծառերը, վորոնցից մենք կարող էլինք «արածել», անձեռնմխելի թողնելով ուշ հասնող, կամ վարենիայի համար նշանակած պտուղները: Հիշում եմ ինչպես էլին զարմանում ծանոթները, յերբ տեսնում էլին, ինչպես կեռասի յերեք ծառեր, մեր տանը մոտ, ամռան յերեկոների թեյ խմելու տեղը, կանգնած էլին պտուղներով բեռնավորված և այդպես մնում էլին մինչև հուլիսի 20-ը (հայրիկի անվանակոչութեան օրը) և ինչպես յերեխաներից վոչ մեկը ձեռք չէր տալիս այդ ծառերին, չնայած հնարավոր էր այդ անելու:

— Յերեխաները կարող էլին պտուղներ ուտել այգու մյուս մասում, իսկ այս ծառերին խնդրել էլի ձեռք չտալ մինչև ամսի 20-ը,—ասում էր մայրիկը:

Մեր մայրը կարողանում էր պահպանել կարգ ու կանոն, յերբեք ավելորդ տեղը մեզ հնեղացնելով՝ մեզ այն չափով էր ազատութիւն տալիս, վոր այն յերբեք սահմանից չանցներ և չէր խառնվում ուրիշների ազատութեանը: Այդ բանը մեր բոլորիս դաստիարակութեան համար խոշոր նշանակութիւն ուներ:

Այն խելացի կարգապահութիւնը, խնամքոտ վերաբերմունքը, վորը հանգես էր բերում Վլադիմիր Իլյիչն իր անձնական կյանքում, վորը նա պահանջում էր իր բոլոր ընկերներից պետական շինարարութեան մեջ, Իլյիչի մեջ արմատացել էր դեռ մանկութիւնից:

ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ

1886 թվին, յերբ լրացավ Վլադիմիր Իլյիչի տասնևվեց տարին, մեր բախտավոր ընտանիքն առաջին ծանր հարվածը ստացավ. հունվարի 12-ին հանկարծակի վախճանվեց մեր սիրելի հայրիկ՝ Իլյա Նիկոլայեվիչը: Ալեքսանդր Իլյիչն այդ ժամանակ Պետերբուրգումն էր: Վալդայան ընտանիքում մեծ վորդին էր մնացել և նա, չնայած իր յերիտասարդ հասակին, շատ ուշադիր վերաբերմունք ցույց տվեց դեպի մայրը, շատ ոգնեց նրան թեթևացնելու նրա վրա անակնակալ կերպով ծանրացած հոգսերը: Այդ ձմեռը յեռ մնացի Սիմբիրսկում, վորտեղ հայրս վախճանվեց այն ժամանակ, յերբ ծննդյան տոնի առթիվ արձակուրդի եյի յեկել: Ինձ անհրաժեշտ էր կուրսերի համար լատիներեն սովորել և Վալդայան, վորը շատ լավ դիտեր այդ լեզուն, ինձ ոգնում էր սովորելու: Հիշում եմ, ինձ ինչպես լավ էր բացատրում և ինչպիսի կենդանի հետաքրքրությամբ տեղի եյին ունենում մեր դասերը: Նա այն ժամանակ ասում էր, վոր զիմնագիտյի կուրսը շատ յերկար է, վոր հասակավոր, զիտակից մարդը 8 տարի տեող ուսումը կարող է ավարտել յերկու տարվա ընթացքում: Յեվ նա այդ ասացուցեց ուսուցիչ Ագորոզնիկովին յերկու տարվա ընթացքում պատրաստելով, վորպեսզի նա զիմնագիտյ արտակարգ քննություն տա:

Այդ ուսուցիչը ծագումով չուվաշ էր և չուվաշական զրպրոցումն էր դասավանդում: Նա խոշոր ընդունակություններ ունէր մաթեմատիկայի ասպարիզում: Նա մաթեմատիկա յեր սովորել ինքնուրույն կերպով և ցանկանում էր շարունակել այն: Բայց համալսարան մտնելու համար հարկավոր էր զիմնագիտյի ավարտական քննություն տալ, քննություն տալ բո-



Ալեքսանդր Իլյիչ Ուլյանովը 1878 թ.

լոր հին լեզուներէց: Չուվաշի համար՝ վորը վատ եր իմանում ուսեբեն լեզուն, այդ բանը հեշտ չեր, հատկապես գործը դժվարանում եր, վորովհետև նա այնքան ել փայլուն ընդունակութիւններ չուներ լեզուներէի և հասարակական գիտութիւններէի նկատմամբ՝ այնուամենայնիւ մեր ընտանիքին մոտ ծանոթ չուվաշական զպրօցի տեսուչ Յակովլեֆն, առաջարկեց Վալդիային՝ պարապել Ագորոզնիկովի հետ և պատրաստել նրան քննութիւն տալու: Նա սկսեց պարապել Ագորոզնիկովի հետ և չնայած իր սեփական դասերին, վոր նա ուներ վերջին յերկու դասարաններում, պատրաստեց նրան մեկ ու կես, յերկու տարվա ընթացքում:

Յեւ Ագորոզնիկովը Վալդիայի հետ միասին մի տարում գիմնագիտայի քննութիւն տվեց և ընդունվեց համալսարան: Պետք ե ասել, վոր Վալդիայն պարապում եր առանց վարձատրութիւն, վորովհետև նրա աշակերտը վոչ մի միջոց չուներ:

1887 թվին, յերբ Վալդիայն վերջին դասարանումն եր, մեր ընտանիքին մի ուրիշ դժբախտութիւն պատահեց — Ալեքսանդր Ս-ը թագավորի վրա մահափորձ կատարելու համար Պետերբուրգում ձերբակալվեց Ալեքսանդր Իլիչը:

Վլադիմիր Իլիչին այդ ժամանակ վիճակված եր առաջինը լսել այդ ծանր լուրը և այդ լուրի համար պատրաստել մորը: Ահա թե ինչպես տեղի ունեցավ այդ: Ալեքսանդր Իլիչի ձերբակալման մասին և ինձ՝ նրա քրոջը, տողերիս գրողին, հայտնեց Սիմբիրսկում արդեն հիշված մեր ընտանիքի բարեկամուհի Կաշկադամովան, խնդրելով, վոր դրա համար յես պատրաստեմ մայրիկին: «Նամակը ստանալով, — պատմում ե Կաշկադամովան, — յես ուղարկեցի Վալդիային գիմնագիտայից կանչելու և տվեցի նրան նամակը կարդալու: Նա հոնքերը ուժեղ կերպով կիտեց և յերկար, լուռ կենտրոնացավ նամակի վրա: Իմ առաջն եր արդեն վոչ թե նախկին ուրախ, անհող տղան, այլ հասակավոր մի մարդ»: «Բայց, չե վոր գործը լուրջ և, Սաշայի համար գործը կարող ե վատ վախճան ունենալ» — ասաց նա:

Ավելի ուշ, յերբ մայրը Պետերբուրգ գնաց իր մեծ յերեխաների համար հոգ տանելու, Վալդիայն, Կաշկադամովայի ասելով,

բազմիցս ասում եր. — «Նշանակում ե Սաշան այլ կերպ անել չեր կարող, նշանակում ե նա այդպես պետք ե վարվեր»: Վալդիայն այդ դժբախտութիւնն ապրեց մեծ հաստատակամութեամբ, նա շարունակեց ուշադիր կերպով պարապել, բայց դարձավ լուրջ և լուսկաց ու յերբ գալիս եր փոքր քույրերի և յեղբոր մոտ, աշխատում եր ուրախացնել նրանց, շատախոսում եր, առաջվապես կատակում ու նրանց սեբուսներ ու հանելուկներ տալիս լուծելու համար:

Ալեքսանդր Իլիչի գործն իրոք վոր վերջացավ լուրջ կերպով, նա համարվեց մահափորձի գլխավոր ղեկավարներէից մեկը, գատապարսկեց մահապատժի և 1887 թ. մայիսի 8-ին գլխատվեց:

Սիմբիրսկու գիմնագիտայի վարչութիւնը նկատողութիւն ստացավ նրա համար, վոր լավագույնս վկայականով և վոսկե շքանշանով ե բաց թողել նման «սարսափելի հանցագործին»: Կարծում եյին, վոր չի կարելի վոսկե շքանշան տալ նաև նրա յեղբոր — Վլադիմիր Իլիչին, բայց վերջինիս հաշտութիւններն ամբողջ ութ տարի գիմնագիտյում սովորելիս այնքան ակներև եյին, նրա ավարտման քննութիւնների պատասխաններն այնքան փայլուն եյին, վոր չեր կարելի Վալդիային, ինչպես և նրա քրոջ Ուլգային, գրկել վորևե շքանշանից: Նա այդ շքանշանն ստացավ և մտավ Կազանի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Մայրը մնացած յերեխաների հետ Սիմբիրսկում ծախելով տունն ու ավելորդ ունեցվածքը, նույնպես տեղափոխվեց Կազան: Բայց այն ճնշումը, վորն առանց այդ ել ծանր կերպով ընկել եր անցյալ դարի 80-ական թվականների ուսանողութիւն վրա, ավելի ուժեղացավ 1887 թ. մարտի 1-ի մահափորձից հետո, վորոնց մասնակիցներն ուսանողներն եյին: «Ուսանողների վերակացուները» նշանակվում եյին վոստիկանական իսկական դամբաները, փակվեցին ուսանողական ամենամանկ ընկերութիւնները, ցրեցին բոլոր կազմակերպութիւնները, բանտարկեցին և վտարեցին շատերին: Բոլոր համալսարաններում ուսանողները սկսեցին բողոքել: Կազանի համալսարանում նաև տեղի ունեցան, այսպես ասած, ուսանողական

խառնակութիւնները: Վլադիմիր Իլյիչն ել մասնակցութիւն ունեցավ այդ թույլ շտրված հավաքույթում և մյուսներին թրվում նա ել հեռացվեց համալսարանից և արտաքսվեց Կազանից Կոկուշկինո գյուղը: Այս հեռացումով ել վերջացան նրա աշակերտական տարիները: Բարձրագույն դպրոցների դռները փակվեցին նրա համար: Կրկին համալսարան մտնելու միջնորդումները մերժվեցին գլխավորապես նրա համար, վոր նա Ալեքսանդր Իլյիչի յեղբայրն էր:

Այդպիսով դպրոցական ուսումնի Իլյիչի համար վերջացավ տասն և յոթ տարեկան հասակում: Բայց նա այնքան դիտակից էր, վոր կարողացավ ինքնուրույն, առանց կողմնակի ոգնութեան, ավարտել իր կրթութիւնը:

Նա վերջացրեց պաշտոնական կրթութիւնը՝ յերբ վերջապես իրավունք տրվեց իրավաբանական ֆակուլտետի ավարտման քննութիւն տալու, ըստ վորում նա քննութիւն տվեց նույն շրջանավատների հետ, իբրև թե հեռացված չլիներ համալսարանից: Հիշում եմ, շատերն այն ժամանակ զարամանում էին, վոր նա նույնիսկ այդ ազմկոտ սարիներին ընթացքում անգամ մի տարի ել չի կորցրել, այսինքն, համալսարանի կուրսերի բոլոր գիտութիւններում իրոք պատրաստվել է վոչ թե չորս, ինչպես բոլորը, այլ ինչ վոր՝ յերկու տարում: Համալսարանի ավարտական դիպլոմը նրան արհեստ տվեց (նա գրանցվեց վորպես իրավաբանի ոգնական), նշանակում է և հաց աշխատելու հնարավորութիւն ստացավ. այդ սասին պետք էր մտածել, վորովհետև ամբողջ ընտանիքն ապրում էր միայն մոր թոշակով և հոր թողած աննշան միջոցներով:

Բայց նա իր գավառական կյանքի տարիներում՝ սկզբում Կազանում, իսկ հետո Սամարայում ավարտեց նույնպես հեղափոխականի իր կրթութիւնը: Նա իր վերջնական ուղին գտավ հեղափոխական մարքսիզմի մեջ, բանվոր դասակարգի պայքարի գաղափարի մեջ: Իր սովորութեան համաձայն — ամեն ինչ ուսումնասիրել հիմնովին և մանրամասնորեն, այդպես ել նա ուսումնասիրել է մարքսիզմը: Նա ուսումնասիրել է Մարքսի և Ենգելսի բոլոր գրվածքները — վորոնցից շատերն

այն ժամանակ դեռ ուսերեն չէին թարգմանվել և նա կարգացել է ֆրանսերեն կամ գերմաներեն: Նա, իր սովորութեան համաձայն, ձեռք բերած գիտելիքները տալիս էր յերիտասարդութեան խմբակին, վորը չէր կարողանում ստար լեզուներով կարգար: Նա սկսեց ուսումնասիրել ուսական իրականութիւնը, վորպեսզի պարզի, թե վորքանով Մարքսի ուղին գործադրելի յե այդ իրականութեան նկատմամբ: Յեւ միանգամայն հաստատ, անխախտ կերպով պարզելով այդ, քայլեց այդ ուղիով, իր ստեղծած կոմունիստական կուսակցութեան գլուխն անցած՝ իր հետեւից տարավ Ռուսաստանի բանվոր դասակարգը և նրան հաղթանակի հասցրեց:



-դաքի ամ ձ յձխմանկրդանի միլիձէ մձդձսւոտ ուձր յանանաձ մլա
մալձիւոցոյիոս զի ,ամ մձդձմանկրձր ձայ մձդձսմաղձի ձ յձրաբ
-դասաոձիղձի զձ սիլաոս զղձմձցիլլիձոձիք ձաղձց զոձձ մլանձանաձ
իոցձմաոքձի զաոսո կաոմաբոցալ զձի զղոյի միլիաղևոլ մալձիւոբ
-աոլձիւոմալաղլ մալիասաո յձղլիսամաոսաո ըձսլս ամ զաբղալ
-աձղոք միլիւո զսցղաՄ կամազղոյի ձձլ զիբղաբ զիսձբղոյի զլմ
մլանաբմալի կձձ զղևանաոալմ մալձիւոմալաղլ զլա ձլ զլլձղր
-իլիւո զլա ըձլլազ զլա իոլմբղաբ իոլղձի սոլասլմա ,ոասոսաձ
մալիոյք մալձիւոբլասաոլի մալիասոլմաոնոլ ձաձրձա զի յի
-դալիասաբ զոյիմաղ զմաոսասալոլի կաղաո ըլիլձոձձ զի 'ձաղմա
ըձղըսաձ զիլամաձլրաձ մաղմ ձ զր



50 409.

16956

34-1
Ca 819

807

10 MAY 1934

A. I. ULJANOVA
İLİCİN coğuqluq və məktəv illəri
Fırbəneşr—Bakъ—1934